ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1161-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց թիվ 5/18 հասցեում քաղ. Նորիկ Մուխաելյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 98.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 96.27 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 14.06.2023թ. թիվ 0834-Ա որոշմամբ ճանաչվել է Արմավիր համայնքի սեփականություն / սեփականության վկայական 26062023-04-0106 / և օրինականացվել է: Քաղ. Նորիկ Մուխաելյանի կողմից դիմում է ներկայացվել համայնքապետարան նշված շինությունը 96.27 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի և օգտագործման համար անհրաժեշտ 98.0 քմ մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի բ) ենթակետով, 35.1 և 36-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Նորիկ Մուխաելյանի լ/ա Պավլուշ Մուխաելյանի 07.08.2023 թ. թիվ 4512 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց թիվ 5/18 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտեխսպասարկման կայանը՝ 96.27 քմ արտաքին մակերեսով օտարել Նորիկ Մուխաելյանին ՝ բազային տուրքի 90-ապատիկի չափով 1 քմ 15057 դրամով ընդհանուր

1449538 /մեկ միլիոն չորս հարյուր քառասունիններ հազար հինգ հարյուր երեսունութ / ՀՀ դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 98.0 քմ մակերեսով հողամասը օտարել՝ հողամասի կադաստրային արժեքով՝ 1 քմ 2887.5 դրամով՝ ընդհանուր 282975 /երկու հարյուր ութսուներկու հազար իններ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,ընդհանուր առմամբ վճարման ենթակա է՝ 1732513 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀդրամ:

2.Վաճառքի գնին հավելվում են մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վճարել 175813 /մեկ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար տասներեք/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1758513 / մեկ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար տասներեք /ՀՀ դրամ օրինականացման գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1162-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> հ. 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ , 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում,/ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը 2022 թվականի սեպտեմբերի 23 /Հակոբ Սարգսյանի 12.09.2023թ. թիվ 5146 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի 04-066-0260-0003 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Հակոբ Սարգսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0260-0003 կադաստրային ծածկագրով 0.045 հա մակերեսով հողամասին կից

ավել զբաղեցրած 0.0088 հա մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2.Հակոբ Սարգսյանին /ծնված 15.10.1971թ./, սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայքի Մյասնիկյան գյուղում 04-066-0260-0003 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 0.0538 քմ օրինական հողամասի վրա 1992թ. կառուցված 45.6 քմ ներքին մակերեսով և 60.4 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

3.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հակոբ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայքի Մյասնիկյան գյուղի 04-066-0260-0003 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ, Այգեգործական թաղամաս 1-ին փողոց 45:

6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0260-0003 կադաստրային ծածկագրով գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2022K2NTZE:

7.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1163-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ 0487-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 21-ի թիվ 0487-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

2) Որոշման 1-ին կետում «13.12.1988» թվերի փոխարեն կարդալ «12.12.1987»:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2023 թվականի N 1164-Ա

ՊՅՈՏՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Պյոտր Ալոյանի 29.08.2023թ. թիվ 4933 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Պյոտր Ալեքսանդրի Ալոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղ 04-043-0868-0021 կադաստրային ծածկագրով գույքինտալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ Այգեգործական 1-ին թաղամասի 1-ին փողոց, 9 հողամաս:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1165-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքին սեփականության իրավունքով պատկանող 04-001-0075-0005 կադաստրային ծածկագրից 0.0202 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությանը սահմանել բնակավայրերի հասարակական կառուցապատման:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքին սեփականության իրավունքով պատկանող 04-001-0075-0005 կադաստրային ծածկագրից 0.0202 հա մակերեսով հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք Արմավիր քաղաք Երևանյան փողոց 51/7:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1166-Ա

ԳԵՂԱՄ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Գեղամ Նավասարդյանի 23.08.2023 թ. թիվ 4807 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գեղամ Նավասարդյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ.Հերացու թաղամաս 71 հասցեում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Մ.Հերացու թաղամաս 70:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2023 թվականի N 1167-Ա

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Արմեն Հարությունյանի 2023 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 5383 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Արմեն Հարությունյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 20 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ից (01.02.2022թ.-01.02.2023թ. ժամանակահատվածի համար):
2.Արմեն Հարությունյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 30-ին:
3.Նշված ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Արմեն Հարությունյանի պարտականությունները վերապահել և GAZ 3110 մակնիշի 378AT61 պետհամարանիշի ծառայողական մեքենան տրամադրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրենի տեղակալ աղբահեռացման գծով Արթուր Հարությունյանին:
4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության հաշվապահին՝ ի գիտություն:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2023 թվականի N 1168-Ա

«ԱՆԻ» ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ.դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Գուրգեն Վարդանյանի 15.09.2023թ. թիվ 5209 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Անի» կոոպերատիվին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 20 շենքում գտնվող 69.9 քմ տարածքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Հ. Բաղրամյան փողոց, 20 շենք, 1/3 տարածք:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբեր 26
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2023 թվականի N 1169-Ա

«ՀԱՑԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԲԱԳՐԱՏ ՄՈՒԽԱԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հացիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բագրատ Մուխաելյանի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 5417 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հացիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բագրատ Մուխաելյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 10 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ից:
2.Բագրատ Մուխաելյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 16-ին:
3.Նշված ժամանակահատվածում «Հացիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բագրատ Մուխաելյանի պարտականությունները վերապահել «Խանջյանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Աշոտ Եղիազարյանին:
4.«Հացիկի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 26
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1170-Ա

ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ,ԱՐՄԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, /ըստ ժառանգության իրավունքի վկայագիր 2023թ. օգոստոսի 25/ Գրիգոր Ներսիսյանի 04.09.2023թ. թիվ 5005 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գրիգոր Ներսիսյանին,Արմեն Ներսիսյանին և Արման Ներսիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղ 04-066-0639-0020 կադաստրային ծածկագրով գույքին/ սեփականության վկայական 1550095/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ 10-րդ փողոց 21:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1171-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը Ռուզաննա Գրիգորյանի լիազորված անձ Գրիգոր Ներսիսյանի 04.09.2023թ. թիվ 5006 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռուզաննա Գրիգորյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղ 04-066-0017-0021 կադաստրային ծածկագրով գույքին/ սեփականության վկայական 23012023-04-0045/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ 10-րդ փողոց 20:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 1172-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 24-ի թիվ 381-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Ջիվանու փողոցի թիվ 19 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 12.0 (տասներկու) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է Ա/Ձ Սարո Դավթյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Սարո Դավթյանի միջև 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 5002/:

Այնուհետև Արմավիր համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 08-ի թիվ 22-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Ջիվանու փողոցի թիվ 19 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացվել է մինչև 10.08.2022 թվականը, համաձայն որի Արմավիրի համայնքապետարանի և Ա/Ձ Սարո Դավթյանի միջև 2017 թվականի փետրվարի 23-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 965/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Ա/Ձ Սարո Դավթյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Սարո Դավթյանի միջև 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով Ա/Ձ Սարո Դավթյանի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 5395 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Ա/Ձ Սարո Դավթյանի միջև 2011 թվականի օգոստոսի 10-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 5002/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 10.08.2028 թվականը:

2) Պայմանագրի 1.1 կետում «3000 (երեք հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «36000 (երեսունվեց հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «144000 (մեկ հարյուր քառասունչորս հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ Ա/Ձ Սարո Դավթյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2011 թվականի օգոստոսի 10-ին՝ /սեղ. նո 5002/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 1173-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 17-ի թիվ 106-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 9/4 ժամանակավոր հասցեում գտնվող 26.4 (քսանվեց ամբողջ չորս տասնորդական) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է մրցույթում հաղթող ճանաչված քաղաքացի Դավիթ Մովսիսյանին՝ առևտրի օբյեկտ, տաղավար տեղադրելու նպատակով, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Դավիթ Մովսիսյանի միջև 2016 թվականի ապրիլի 14-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 1801/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Դավիթ Մովսիսյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Դավիթ Մովսիսյանի միջև 2016 թվականի ապրիլի 14-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով քաղաքացի Դավիթ Մովսիսյանի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 5413 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Դավիթ Մովսիսյանի միջև 2016 թվականի ապրիլի 14-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 1801/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 14.04.2028 թվականը:

2) Պայմանագրի 1.1 կետում «3500 (երեք հազար հինգ հարյուր)» բառերի փոխարեն կարդալ՝ «8000 (ութ հազար)» բառերը:

3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «92400 (իննսուներկու հազար չորս հարյուր)» բառերի փոխարեն կարդալ՝ «211200 (երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ քաղաքացի Դավիթ Մովսիսյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2016 թվականի ապրիլի 14-ին՝ /սեղ. նո 1801/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1174-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 05-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Հասմիկ Հակոբյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Հասմիկ Հակոբյանի դիմումը և թույլատրել ք. Արմավիր, Երևանյան 2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելը:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Հասմիկ Հակոբյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1175-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Էդգար Սարոյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Էդգար Սարոյանի հայտը և թույլատրել ք. Արմավիր, Սայաթ-Նովա 120 շ., 1-ին հարկ հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Էդգար Սարոյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1176-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Հասմիկ Հակոբյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Հասմիկ Հակոբյանի հայտը և թույլատրել ք.Արմավիր,Երևանյան 2 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման,հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Հասմիկ Հակոբյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1177-Ա

ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 100.0 հազար դրամ միանվագ գումար հատկացնել Արմավիր համայնքի Արաքս գյուղի Վարդանյան փողոցի 80 տան բնակչուհի, մեկ դարը բոլորած երկարակյաց Արաքսի Մարտիրոսի Բաղրամյանին՝տարեցների միջազգային օրվա կապակցությամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ սեպտեմբերի 28
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1178-Ա

ՍՏԵՓԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը,/ համաձայնագիր ժառանգական գույքի բաժանման մասին 2023թ. սեպտեմբերի 25/ Ստեփան Համբարձումյանի 26.09.2023 թ. թիվ 5419 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեփան Համբարձումյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության 10ա տարածք հասցեում գտնվող գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Հանրապետության 10ա շենք 20:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1179-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 081-Ա, 082-Ա, 091-Ա որոշումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2023 թվականի նոյեմբերի 6-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, նախավճարի և քայլի չափերի:

2.Հաստատել աճուրդային կարգով օտարվող հողամասի վերաբերյալ հրապարակային ծանուցման տեքստը, համաձայն թիվ 2 հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելու նպատակով ստեղծված աճուրդային հանձնաժողովին՝ սույն թվականի հոկտեմբերի 2-ին հրավիրել հանձնաժողովի նիստ, հաստատել սույն որոշման հավելված 2-ով հաստատված հողամասերի աճուրդային կարգով օտարման պայմանները:

4.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի իրավաբանական բաժնին օրենքով սահմանված կարգով՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումները և ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ֆ. Պետրոսյանը:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ սեպտեմբերի 29
Ք. Արմավիր

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ղեկավարի 2023 թվականի
սեպտեմբերի 29 -ի N 1179-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը (դրամ)	նախավճարի չափը (դրամ)	Քայլի չափը (դրամ)
1.	Համայնք Արմավիր Գ. Մյասնիկյանում գտնվող՝ 04-066-0195-0056 ծածկագրով	0,2865	գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության	Գյուղմթերք արտադրելու նպատակով	չկա	առկա է	չկա	193500	96750	9675
2.	Համայնք Արմավիր Գ. Մյասնիկյանում գտնվող՝ 04-066-0195-0057 ծածկագրով	0,726	գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության	Գյուղմթերք արտադրելու նպատակով	չկա	առկա է	չկա	490000	245000	24500
3	Համայնք Արմավիր ք. Արմավիր Ֆ. Նանսենի փ 2/5 հասցեում գտնվող՝ 04-001-0135-0019 ծածկագրով	0,06113	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների՝ գործառնական նշանակության	Արտադրամաս կառուցելու նպատակով	չկա	առկա է	չկա	2240000	1120000	112000

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ղեկավարի 2023 թվականի
սեպտեմբերի 29 -ի N 1179-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիր համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական աճուրդ

Լոտի հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Մեկնարկային գինը (դրամ)	Նախավճարի չափը (դրամ)	Քայլի չափը (դրամ)	Աճուրդի անցկացման ամիս ամսաթիվը	Աճուրդի անցկացման ժամը	Աճուրդի ծածկագիրը
1.	Համայնք Արմավիր Գ. Մյասնիկյանում գտնվող՝ 04-066-0195-0056 ծածկագրով	0,2865	գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության	Գյուղմթերք արտադրելու նպատակով	193500	96750	9675	06.11.2023թ.	11^{-00}	ՀԱ-08-23
2.	Համայնք Արմավիր Գ. Մյասնիկյանում գտնվող՝ 04-066-0195-0057 ծածկագրով	0,726	գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության	Գյուղմթերք արտադրելու նպատակով	490000	245000	24500	06.11.2023թ.	11^{-30}	ՀԱ-09-23
3	Համայնք Արմավիր ք. Արմավիր Ֆ. Նանսենի փ 2/5 հասցեում գտնվող՝ 04-001-0135-0019 ծածկագրով	0,06113	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների՝ գործառնական նշանակության	Արտադրամաս կառուցելու նպատակով	2240000	1120000	112000	06.11.2023թ.	12^{-00}	ՀԱ-10-23

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Ճանապարհներ առկա է: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:

Աճուրդներում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդներին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Արմավիրի համայնքապետարանի իրավաբանական բաժնում, ք. Արմավիր, Հանրապետության փողոց 32, 3-րդ հարկ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդները կայանալու են 2023 թվականի նոյեմբերի 6-ին, հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 1-ը, ժամը 18:00-ն:

Աճուրդների պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտեր ներկայացնելու համար դիմել Արմավիրի համայնքապետարան /ք. Արմավիր Հանրապետության 32, 3-րդ հարկ, իրավաբանական բաժին/: Հեռ.՝ /0237/ 2 02 24:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1180-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ և 78-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 31-ի թիվ 031-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2023 թվականի նոյեմբերի 3-ին կազմակերպել կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթ՝ հավելվածով հաստատված ցուցակի համաձայն:

2.Արմավիր համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրող մրցութային հանձնաժողովին՝ սույն թվականի հոկտեմբերի 2-ին հրավիրել հանձնաժողովի նիստ, հրապարակել սույն որոշման հավելվածով հաստատված հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթի պայմանները:

3.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ֆելիքս Պետրոսյանին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կառուցապատման ենթակա անշարժ գույքի հրապարակային ծանուցման հրապարակումը զանգվածային լրատվության միջոցով, www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել մրցույթի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

4.Մրցույթի վարման համար աճուրդավար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ալինա Հովհաննիսյանին:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ֆ. Պետրոսյանը:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի29

ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի
ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի
N 1180-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՑՈՒՑԱԿ

Լոտի հ/հ	Անշարժ գույքի հասցեն /գտնվելու վայրը/, ծածկագիր	Մակերեսը /քառ. մետր/	Նպատակային և գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1	ք. Արմավիր Երևանյան փողոց 26/3 04-001-0050-0098	41,0	Բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության	ժամանակավոր շինություն /տաղավար/ տեղադրելու համար՝ առևտրային գործունեություն իրականացնելու նպատակով	492000 /չորս հարյուր իննսուներկու հազար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1181-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Հարությունյանի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 5488 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Հարությունյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի 15 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ից (16.05.2023թ - 16.05.2024թ. ժամանակահատվածի համար):
2.Լիլիթ Հարությունյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները վերապահել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Վիոլետա Մաթևոսյանին:
4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ արձակուրդային գումարի վճարումը կատարել հոկտեմբերի ամսվա աշխատավարձի հետ:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. սեպտեմբերի 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1182-Ա

«ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 05-ի թիվ 443-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 33 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող տաղավարի փաստացի զբաղեցրած 22.0 (քսաներկու) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 (հինգ) տարի ժամկետով հատկացվել է «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս տնօրեն՝ Սմբատ Մովսիսյանի միջև 2011 թվականի սեպտեմբերի 26-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 6265/:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարի 2016 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 352-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց թիվ 33 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացվել է մինչև 26.09.2023 թվականը, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս տնօրեն՝ Սմբատ Մովսիսյանի միջև 2016 թվականի սեպտեմբերի 28-ին կնքվել է հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ /սեղ. նո 6315/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

«ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2011 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Սմբատ Մովսիսյանի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 5444 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արմավիրի քաղաքային համայնքի և «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2011 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 6265/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 26.09.2030 թվականը:
2) Պայմանագրի 1.1 կետում «5000 (հինգ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:
3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «110000 (մեկ հարյուր տասը հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «264000 (երկու հարյուր վաթսունչորս հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ «ԱՆԴՐՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ի դեմս տնօրեն՝ Սմբատ Մովսիսյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2011 թվականի սեպտեմբերի 26-ին՝ /սեղ. նո 6265/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 1004-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան,Արաքս,Լենուղի, Լուկաշին,Խանջյան,Հացիկ,Մայիսյան,Մյասնիկյան, Սարդարապատ գյուղերում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերի ցածրարժեք հողատեսքերը ավելի բարձրարժեքի փոխադրելու մասին» թիվ 1004-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

1)որոշման հավելված N 8-ի 11-րդ, 12-րդ և 13-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

